ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4 փ, 4 շ., Հեռ.
(094) 248414 , geghadir.kotayq@mta.gov.am

N 151
07 օգոստոս 2018թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

<<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն, Ձեզ է ուղարկվում Գեղադիր համայնքի ավագանու 2018թվականի օգոստոսի 3-ի արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Ֆ.Մուրադյան
Հեռ 095161060

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, gegharir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2018թվականի N 27-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի դրոյթներով՝համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.
1) Համայնքի ավագանու 2018թվականի հունիսի 13-ի N 19-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2)Համայնքի ավագանու 2018թվականի հունիսի 13-ի N 20-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3)Գեղադիր համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝2017թվականի հաշվետու տարում համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2018թվականի N 28-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 19-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղադիր համայնքի ավագանու 2018թվականի հունիսի 13-ի<<Համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին>>N19-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն
1)որոշման նախաբանում <<Տեղական ինքնակառավարման մասին>>բառերից հետո գրված <<Հայաստանի Հանրապետության >>բառերը հանել:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 246414, gegharir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2018թվականի N 29-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 20-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ավագանու 2018 թվականի հունիսի 13-ի<<Գեղադիր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N52-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>>N20-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն.
1)որոշման նախաբանում <<Տեղական ինքնակառավարման մասին>> բառերից հետո գրված <<Հայաստանի Հանրապետության>>բառերը հանել:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, gegharir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2018թվականի N 30-Ա

ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ կետի՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Ի գիտություն ընդունել Գեղադիր համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2017թվականի հաշվետու տարում համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Գեղադիր համայնքի ավագանու
2018թվականի օգոստոսի 3-ի
N 30-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Գեղադիր համայնքում տեղի ունեցավ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի (այսուհետ ՀԶՀԾ) իրականացման 2017թվականի տարեկան հաշվետվության քննարկման հանրային բաց լսումները:

Հանրային բաց լսումներին ներկա էին համայնքի ղեկավարը, համայնքապետարանի աշխատակազմը, ավագանու անդամները, համայնքում գործող առևտրի և այլ հիմնարկների աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Հրաչյա Սարգսյանը, մասնավորապես նշելով, որ հանրային բաց լսումների նպատակն է համայնքի բնակչությանը իրազեկել 2017թվականի տարվա համար համայնքի հնգամյա ծրագրով նախատեսված և մինչև օրս իրականացված ծրագրերի իրականացման և հետագա անելիքների մասին:

Գեղադիր համայնքը բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է, որտեղ մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային որոշ ծառայությունները՝ դպրոցական կրթություն և դաստիարակություն, մշակութային, սպորտային ծառայություններ և այլն:

Գեղադիր համայնքի 2017-2021թվականների սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրում ընդգրկված թվով 9 խնդիրներից/ծրագրերից 3-ը նախատեսված էր իրականացնել 2017թվականին;

ԾՐԱԳԻՐ1.

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

2017թվականի գարնանը հիմնովին վերանորոգվեց համայնքի մանկապարտեզի շենքը. համայնքի զարգացման ծրագրով նախատեսված էր ձեռք բերել գույք և անհրաժտ սարքավորումներ,որոնց համար անհրաժեշտ է 6 000 000 դրամ գումար:

Դիմել եմ շատ կազմակերպությունների և ձեռք եմ բերել համաձայնություն մանկապարտեզը կահավորելու և շահագործելու համար:Մանկապարտեզը կգործի 2018թվականի սեպտեմբերին:

ԾՐԱԳԻՐ2.

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏԸ

Համայնքի գլխավոր հատակագծի աշխատանքները սկսվել են 2014թվականին և ավարտվել է 2017թվականին.աշխատանքները կատարելու համար համայնքի բյուջեից փոխանցվել է 4 00 000 դրամ:Գեղադիր համայնքն ունի գլխավոր հատակագիծ:

Ծրագիր3.

ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Նախատեսված է *Համայնքի ջրագծերի վերանորոգման և նոր կառուցվող թաղամասի համար խմելու ջրագծի կառուցման աշխատանքներ:*

Ֆինանսավորում չլինելու պատճառով ծրագիրը չի իրականացվել:

2017թվականին պարսպապատվել է համայնքի գերեզմանատան ճակատային մասը ՝գործարար Վարդան Բարսեղյանի միջոցներով:

Հնգամյա ծրագրում 2017թվականի տարվա համար նախատեսված ծարագրերը բավական աշխատանք և ջանքեր պահանջող ծրագրեր են,որոնց կատարման համար ջանքեր չեն խնայվել: Չիրականացված ծրագրերը ընթացքի մեջ են:

Գեղադիր համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 5 անդամներով:

Աշխատակազմի աշխատանքի համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, կահույքը նորացված է, համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, որը լիովին բավարար է աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար:

Համայնքը ենթակառուցվածքներ չունի:

2017թվականի ընթացքում տրվել է 2 շինարարության թույլտվություն,օրինականացվել է համայնքի բնակիչների կողմից ինքնակամ կառուցված 7 շինություններ, տրվել է շինարարության ավարտը փաստագրող 3 ակտ,տրվել է համայնքի մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերակառուցման ,ջեռուցման համակարգի կառուցման շահագործման և Գեղարդալճի ինքնահոս համակարգի կառուցման թույլտվություն. սա վկայում է այն մասին, որ համայնքը միշտ զարգացման ընթացքում է:

Գեղադիր համայնքում աղբահանության գործընթացն իրականացվում է շաբաթական 1 անգամ Գառնի համայնքի վարձակալած տրանսպորտի միջոցով, Համայնքում չկան անտառապատ տարածքներ, ջրավազաններ,զբոսայգիներ:

Համայնքն ունի հատուկ պահպանվող տարածքներ,դամբարանադաշտեր: Համայնքում առկա է մատուռ:

Համայնքում գործում են գազալցակայան,բենզալցակայան, հյուրանոց,ռեստորաններ և խանութներ:

Համայնքի բյուջեի միջոցները գոյանում եմ հողի հարկից,գույքահարկից,տեղական տուրքերից, վճարներից և այլն

Համայնքն ունի միջնակարգ դպրոց, որտեղ 2017թվականին սովորել են 63 երեխա, աշխատում են 20 մարդ որոնցից ուսուցիչներ 14: Դպրոցն ունի վերանորոգման կարիք:

Համայնքն ունի www.geghadir.am ինտերնետային վեբ կայքը, որտեղ տեղ է գտնում համայնքային նորությունները, համայնքում իրականացվող բոլոր միջոցառումները, համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումները, կարգադրությունները, համայնքի բյուջեի ծախսային և եկամտային մասերը և դրանց տնօրինումն ըստ կատարման ժամկետների, ինչպես նաև հայտարարություններ:

Գեղադիր համայնքի բնակչությունը մասնակցում է տեղական ինքնակառավարմանը:

Բացի դրանից համայնքի www.geghadir.am վեբ կայքի, ինչպես նաև համայնքում տեղադրված հայտարարությունների ցուցատախտակների և արդեն 2017թվականից sms հաղորդումների միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ